

ՔԼԷՄԱՆՍՈՅԻ ԿՏԱԿԸ

ՓԱՐԻԶ, 28 Մարտ 1929

Ասիկա իմ կտակա է: Կ'ուզեմ թաղուիլ Քօլոմպիէ՝ հօրս քով: Մարմինս պէտք է փոխադրուի մեռելատունէն թաղման տեղը՝ առանց ու եւ է թափօրի կամ ու եւ է ձեռով արարողութեան: Ու եւ է կտրատում տեղի պէտք է ունենայ: Ոչ ցոյց, ոչ հրաւեր, ոչ արարողութիւն: Փոսին շուրջ, միայն երկաթէ վանդակապատ մը՝ առանց անունի, ինչպէս հօրս գերեզմանը: Դագաղիս մէջ կ'ուզեմ որ զինն երկաթէս բռնատեղիով ձեռնացուպս որ երիտասարդութենէս մնացած է եւ այժի մորթով փաթեթուած փոքրիկ արկղիկը որ իմ հա-



ՔԼԷՄԱՆՍՈՅԻ դիմակը
(Մահուան անկողնոյն վրայ)

Սիբառ արձանագործին կողմէ կաղապարուած)

յեղաւոր պահարանիս վերի յարկը ձախ անկիւնը կը գտնուի: Անոր մէջ պէտք է թողուն պզտիկ գիրքը զոր սիրելի մայրիկս իր ձեռքով հոն դրած է:

Վերջապէս, պէտք է հոն դնել նաեւ երկու փոքրիկ փունջեր չորցած ծաղիկներու որ պարտէզին վրայ նայող սենեակին շրմինէին վրայ են: Պզտիկ փունջը պէտք է մացնեն մեծը պարունակող օպիւսին մէջ, եւ ամբողջութիւնը պէտք է իմ քովս դրուի:

Կտակակատար կ'անուանեմ իմ շատ սիրելի բարեկամս Նիքօլա Փիլէթրին, անոր միացընելով փաստաբան Մէթր Փուրնէնը եւ Մի-

շէլ որդիս, եւ իրենց շնորհակալութիւն կը յայտնեմ այն ներդրեան համար զոր ասիկա իրենց պիտի կարենայ պատճառել:

Ժ. ՔԼԷՄԱՆՍՈ

Արկղիկը, որուն կ'ազնարկէ Քլէմանսօ, իր մօրմէն իրեն նուիրուած էր՝ երբ փոքրիկ տղայ էր. մայրը կ'առնէր դայն ամէն տարի եւ մէջը քանի մը ֆրանք ու յիշատակի ընծայ մը զնելով անոր կուտար նորէն, տարի մը հոն դրած էր Մարիուս տը Ֆիկարօի 1828ի տպագրութեամբ օրինակ մը: Այդ արկղիկն ու այդ գիրքն է որ ուզած է իր դագաղին մէջ դնեն:

Գալով ծաղիկներուն, անոնք իրեն նուիրուած էին 1918 Յուլիս 15—17ի Շամփանեի ճակտին վրայ գերման յարձակողականէն քանի մը օր առաջ: Քլէմանսօ, իմանալով զօրավար Փէթէնի ընդգրկած նոր թաքթիքը, որով առաջին գծին վրայ պիտի դրուէին քիչ թիւով զինուորներ թեթեւ զինավորութիւն մը ընելու համար, որպէս զի թշնամին կարծելով թէ զինացը մեծ ուժ մը չկայ, յառաջ խոյանար եւ վար փշրուիլ շատ զօրեղ կերպով կազմակերպուած երկրորդ գծին վրայ, ուղեց երթալ տեսնել այդ զինուորները որ սահմանուած էին զսուելու, երբ կ'անցնէր ենթասպաներու խումբի մը առջեւէն, անոնցմէ մին քանի մը ծաղիկ քաղեց զետնէն ու նուիրեց իրեն. աչքերը արցունքով լեցուած, Քլէմանսօ ըսաւ այդ քաջերուն, «Տղաքս, այս ծաղիկները դագաղիս մէջ ինծի հետ պիտի ըլլան»: Խօսքը բռներ է:

★ ★ ★

ՈՒԻԼՍԸՆԻ ԵՒ ԼՕՅՏ ԺՕՐԺԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՔԼԷՄԱՆՍՈՅԻ ՄԱՍԻՆ

Հաւատարմութեան Խորհրդաժողովի նախագահի բնօրէնութեան առիւ Միացեալ Նահանգաց նախագահ Ռիլսթրնի յայտարարութիւնը Քլէմանսոյի մասին (17 Յունուար 1919).

Միայն ձերանային չէ, այլ եւ անոր մեծ